

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/4

6 սեպտեմբերի 2016թ.

Քննարկվեց «Վայոց Ձոր Ֆրուկտ» ՍՊԸ դիմումը պետական տուրքի գծով հաշվարկված պարտավորությունները վերացնելու վերաբերյալ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատարը, քննարկելով «Վայոց Ձոր Ֆրուկտ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ ընկերություն) վերաբերյալ վարչական վարույթի նյութերը պարզել է, որ 06.11.2015թ. դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 132.326.771 դրամ, որից ԱԱՀ-ի գծով ընդամենը 2.349.119 դրամ (2.275.348 դրամ ապառք, 73.771 դրամ տույժ), պետական տուրքի գծով ընդամենը 129.977.612 դրամ (36.155.000 դրամ ապառք, 93.822.612 դրամ տույժ):

Արդյունքում, ղեկավարվելով «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածի և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ, 56-րդ, 58-րդ, 88-րդ հոդվածների դրույթներով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ կողմից 06.11.2015թ-ին ընդունվել է թիվ 229/05 որոշումը (այսուհետ նաև՝ Որոշում) «Վայոց Ձոր Ֆրուկտ» ՍՊԸ-ից 132.326.771 դրամ պարտավորության գումար գանձելու մասին:

Գանգատով բերված պահանջի կապակցությամբ, որը վերաբերվում է ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի ժ/պ 06.11.2015թ. թիվ 229/05 որոշումը վերացնելուն, հարկ է նշել, որ ընկերության կողմից բաց են թողնվել Որոշումը բողոքարկելու համար ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ժամկետները: Որոշումն անբողոքարկելի վարչական ակտ դառնալուց հետո ուղարկվել է ԴԱՀԿ ծառայություն՝ կատարման:

Ինչ վերաբերվում է պետական տուրքի գծով ընկերության նկատմամբ հաշվարկված պարտավորությանը, ապա գործում առկա ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովը եկավ եզրակացության, որ անհրաժեշտ է հարցում կատարել համապատասխան լիազոր մարմին՝ բարձրացված հարցերի վերաբերյալ դիրքորոշում ստանալու համար:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի դրույթներով՝ Հանձնաժողովը գտնում է, որ ընկերության դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կասեցման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

«Վայոց Ձոր Ֆրուկտ» ՍՊԸ դիմումի հիման վրա հարուցված վարչական վարույթը կասեցնել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ